

ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԵՏԱՍԽԱՆՆԵՐ

- Ս Պ. ԲՈՒՐԳ. Պ. Ս. ՉՈՒԲԱՐԵԱՆՑ.— Ստացանք Լ. Անդրէկի «Սերգէյ Պետրովիչի պատմութիւնը». տպագրութիւնը մի փոքր կարող է ուշանալ՝ մանաւանդ թարգմանական նիւթերի չափազանց առատութեան պատճառով:
- ԹԻՖԼԻՍ. ՅԱՐ. ԹՈՒՄ.— Ձեր թարգմանութիւնը Դրէնից՝ չենք կարող տպել:
- Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆ. Ե. Շ.— «Ասիում է լսվելու համար» Մ. Նալբանդեանցի՝ ստացանք. ոչ մի տեղ տպուած չէ և կոպուի հետեւեալ համարում: Ստացանք նաև նոյն համակրելի հեղինակի «Աղցմիք»ը, որ կտպուի իւր տեղում: «Գեղունի» մենք աչքով տեսած չունինք. իսկ նորա ցընդաբանութիւնների մասին չատ ենք լսել. արժէ հայրենի տունը արհամարհող այդ եզրուիտների հետ բանակուի մղել: Ձեր խորհրդից կօգտուենք առաջիկայում:
- ԹԱԻՐԻՁ. ԱԶԱՏԵԱՆ.— Ստացանք Ձեխովի «Տանը» վիպակի թարգմանութիւնը. հերթին պիտի սպասէ, ի դէպ խընդրում ենք մեր աշխատակիցներին, որ այդ հեղինակից էլ ոչինչ չուղարկեն մեզ, որովհետև խմբագրութիւնս լիքն է դորա բազմաթիւ պատկերների թարգմանութիւններով:
- Ս. Պ. ԲՈՒՐԳ. ՓՈՒՇ.— Ձեր նամակին կպցրել էք 2 կոպէկի նամակադրոշմ՝ փոխանակ 7-ի և այդպիսով ստիպում էք խմբագրութեանս՝ 10 կոպէկ տուգանք վճարել:— Ձեր «Բանաստեղծ» ոտանաւորը չի տպուի:
- Ս. Պ. ԲՈՒՐԳ. Ա. ԿԱՅԾՈՒՆԻ.— Մինչև այժմ չստացանք Ձեզնից 30 օրինակ «դէպի ս. Էջմիածին» գրքից. պիտի ուղարկէք թէ ոչ:
- ՄՈՍԿՈՒԱ. Ղ. Ք.— Ն. Նադեժդինի «խօսակցութիւն» զրոյցը ստացանք: Կտպուի իւր ժամանակին:
- ՌԱՇՏ. Վ. ԹՈՒՐԵԱՆ.— Ձեր «Հարազատներ» երկը կկարդանք և կպատասխանենք: